8260

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«16» 05 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0086-23

Ձեռնարկողը՝ *«Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊԸ*
ք. Երևան, Թումանյան փողոց 21

Գործունեությունը՝ *Աբովյան համայնքի Զորավար Անդրանիկի 11,17,18,19,20,23,24 հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*
Ք. Աբովյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0086-23

«16» Դեկտեմբեր **2023թ.**

«Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աբովյան համայնքի Զորավար Անդրանիկի 11,17,18,19,20,23,24 հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Թումանյան փողոց 21

Ներածական մաս. Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 11, 17, 18, 19, 20, 23, 24 հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի նախագծերը մշակվել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի, Աբովյանի համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության և պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հայցվող տարածքը գտնվում է ք.Աբովյանում: Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման: Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Կառույցը ինքնը վերգետնյա և մեկ նկուղային հարկերով է: Նկուղային հարկը ծառայում է որպես տեխնիկական տարածք: Մնացած հարկերը բնակելի են: Հարկում տեղակայված են հինգ բնակարաններ, որոնցից երկուսը երեք սենյականոց, երկուսը երկսենյականոց, իսկ մեկը՝ մեկսենյականոց: Բնակարաններում նախատեսված են ընդհանուր սենյակ, ննջարաններ, սանհանգույց և խոհանոց: Հարկերի բարձրությունը 3,30 մ է: Կառույցում նախատեսված է մեկ վերելակ և մեկ Զ-1 տիպի չծխացող աստիճանավանդակ: Շենքի արտաքին հարդարումը նախատեսվում է իրականացնել կախովի երեսպատումով, իսկ արտաքին պատերը ջերմամեկուսացված են: Արտաքին պատուհանները և դռները իրականացված են

հրակայուն և ամրակայուն ապակիներից: Տանիքը հարթ է՝ կազմակերպված ներքին ջրահեռացումով: Բնակելի շենքը նախագծված է գազաֆիկացված, բնակարանների ջեռուցումը և տաք ջրի մատակարարումը իրականացվում է անհատական կաթսաներով: Կառույցի տվյալ հարկայնության համար գործող շինարարական նորմերի պահանջների համաձայն, բնակարանների ելքերը նախատեսված են առաջին տիպի չծխացող աստիճանավանդակների միջոցով: Բնակելի հարկերից դրանց մուտքերը կազմակերպված են օդային գոտու բաց անցումների միջոցով: Բնակարաններից մինչև աստիճանավանդակ ընկած հատվածում հերթականորեն տեղադրված են ծածկվող սարքավորումներով օժտված երկու հերմետիկ դռներ, որոնք համաձայն գործող շինարարական նորմերի՝ թույլատրվում է ապակեպատել միայն ամրանավորված ապակիով: Բաց պատշգամբերի դռները և պատուհանները նախատեսվում է իրականացնել հրակայուն շրջանակներով և ապակե փաթեթներով: Այժմ կառուցված են 6 շենքեր, քննարկման են ներկայացվում նախատեսվող 7 շենք: Հարակից հողամասում նախատեսվում է կառուցել միջնակարգ դպրոց և մանկապարտեզ: Համայնքի ավագանու որոշմամբ հարակից տարածքները նախատեսված է բարեկարգել և կանաչապատել: Տարածքի կենտրոնական հատվածում նախատեսվում է կանաչապատ հանգստի գոտի բնակիչների համար: Շենքերին կից նախատեսված է բաց ավտոկայանատեղի 548 մեքենայի համար: Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ: Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը՝ 8369քմ, Անդրանիկի փողոց 11՝ 1155.9քմ, Անդրանիկի փողոց 17՝ 2189քմ, Անդրանիկի փողոց 18՝ 1082.9քմ, Անդրանիկի փողոց 19՝ 962.4քմ, Անդրանիկի փողոց 20՝ 1291.8քմ, Անդրանիկի փողոց 23՝ 853.1քմ, Անդրանիկի փողոց 24՝ 833.9քմ, կանաչապատում՝ 5021.4քմ, կառուցապատման մակերեսը՝ 2955.75, անջրանցիկ մակերես՝ 391.85, տիպային շենքի արտաքին եզրագծով մակերեսը 422,25քմ x7, բնակարանների ընդհանուր թիվը՝ 415 բնակարան, վերգետնյա ավտոկայանատեղի՝ 548 ավտոկայանատեղի: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր: Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ավտոկայանատեղիներում նախատեսված է մեխանիկական արտածման-ներածման օդափոխություն: Համակարգը Դրսում +5 °C -ից ցածր ջերմաստիճանի դեպքում նպահատակահարմար է գործարկել միայն CO գազի անթույլատրելի կոնցենտրացիայի դեպքում: Թարմ օդ վերցնելու համար նախատեսված է օդառի հորան համալիրի բակային հատվածում: Ա1 և Ա2 համակարգերի տանիքային օդամղիչները տեղակայված են տանիքում: Օդատարները նախատեսված են ցինկապատ թիթեղից, հորիզոնական օդահավաքներին միանալու մասում տեղադրվում են հրակասեցնող կափույրներ: Բնակարանների սանհանգույցներից և խոհանոցներից նախատեսված են բնական արտածման համակարգեր՝ արտածգիչ հորաններում տեղադրվող հրակայուն օդատարներով: Բնակարանների ներսում ցուցադրված կենցաղային օդափոխիչների , ծխահեռացման հովանոցների, օդատարների տեղաբաշխումն ունի խորհրդատվական նշանակություն, այդ պատճառով ծավալաթերթում դրանք ընդգրկված չեն: Բնական արտածման օդատարները հորանի մեջ բարձրանում են 2,5 մ, վեջին երկու հարկերի օդատարները հասնում են մինչև հորանի վերի մակարդակը : Նման համակարգը թույլ է տալիս խուսափել ծխի տարածումից: Տանիքից դուրս եկող բոլոր օդատարները ջերմամեկուսացվում

են: Տանիքում տեղադրվում են դեֆլեկտորներ: Բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումը իրականացվում է քաղաքային ջրատարից: Հակահրդեհային կարիքների ջրամատակարարումն ապահովելու համար նկուղային -1-ին հարկում նախատեսված է մետաղական բաք 1 հատ 2000x1500x2000(H), V=6,0մ3, հակակոռոզին երկտակ ներկումով և պոմպակայան: Բաքը ներառում է հակահրդեհային կարիքների համար 20 րոպեի ջրի պաշար: Հակահրդեհային ելքը բնակելի հարկերի միջանցքների համար կազմում է 2x2.5լ/վրկ, ավտոկայանատեղիի համար՝ 2x2,5լ/վրկ: Նախատեսվում է 1 պոմպակայան: Պոմպակայաններում նախատեսնված են 2 խումբ պոմպեր, որոնցից 1-ը հակահրդեհային է ավտոկայանատեղիների համար, 1-ը խմելու-տնտեսական և հակահրդեհային բնակելի հարկերի կարիքների համար: Պոմպակայանը գտնվում է -1 հարկում –3,60 նիշի վրա: Բնակելի շենքի բնակելի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսվում է ջրաչափական հորաններ: Բնակելի շենքի բնակելի հարկերի միջանցքներում նախատեսված են c=80մմ, 2 հրշեջ ծորակներ L=20մ փողրակներով և d=16մմ ծայրափողով:

Նախատեսվող բոլոր շենքերի հողային աշխատանքները արդեն իսկ իրականացված են, իրականացված են նաև հիմնային և շենքերի 3-7 րդ հարկերի շինարարությունը: Համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի, որի ստացման համար անհրաժեշտ փաթեթը ներկայացվել է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Տեխնիկական ջուրը պայմանագրային հիմունքներով կմատակարարվի Աբովյան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Նախատեսվող բազմաբնակարան շենքերի էլ.մատակարարումը իրականացնել <<Աբոովյան>> 110/35/10 Է/կ-ի և 2-րդ հատոնի 12 բջիջից: Կառուցել 10Կվ ստորգետնյա մալուխագիծ: Կառուցվող տարածքում նախատեսել 10ԿՎ բաշխիչ կայան 2 մուտքով: Կառուցվող բ/կ-ի 2-րդ 10ԿՎ էլ. մատակարարումը իրականցնել <<Էլար-2>> 35/10 Է/կ-ի թիվ 15 բջիջից սնվող բ/կ-3-ի 10ԿՎ սարքվածքից: Բ/Կ-3-ում տեղադրել նոր բջիջ: Նոր կառուցվող բ/կ-ի 10ԿՎ հատոններից կառուցել 2 հատ 2*2000 ԿՎԱ հզորության տրանսֆորմատորներ: Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 59.5 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 420 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինթույլտվությամբ հատկացված վայր:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝ շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան, պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում: Շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը: Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝ ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

անձրևների ժամանակ առ աջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են՝ շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա, շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ: Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 5021քմ: Նախնական տարածքում նախատեսվում է տնկել Կատալպա, Կաղնի ամառային, Թխկի սրատերև, Փռվող գիհի, Սյունաձև թույա, Ասպիրակ, Բարբարիս, Կիպրոս, Թզուկ վարդեր,Սիզամարգ: Տնկվող ծառերի վերջնական տեսակային կազմը և քանակները կհստակեցվեն դենդռոնախագծի մշակումից և համայնքի հետ համաձայնեցումից հետո: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 30 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 2 տարի հետո: Ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային: Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները: Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ճանապարհին կից հատվածում, որը երկար տարիների ընթացքում արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և որտեղ կենսաբազմազանությունը գրեթե բացակայում է: Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը: Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով: Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում: Պարբերաար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները՝
1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 2030000 դրամ:

Պատճառաբանական մաս. Աբովյան համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանն՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ

քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- ըստ անհրաժեշտության նախատեսել շրջանցիկ ճանապարհ՝ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում՝ երթևեկելի ճանապարհները չծանրաբեռնելու նպատակով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աբովյան համայնքի Զորավար Անդրանիկի 11,17,18,19,20,23,24 հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան